



ԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԻՍ 2016

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՐՈՇՅՈՒՐՆԵՐԻ ՄՐՅՈՒՅԹ

Պարզ բառերով բարդի մասին

ԹԵՄԱ ԵԹԵ



- ստեղծագործում ես,
- ունես վերլուծական մտածողություն,
- սիրում ես կիսվել քո գիտելիքներով և օգտակար լինել ուրիշներին, ուրեմն չէ կենտրոնական բանկը «Իմ ֆինանսների ամիս» ծրագրի շրջանակում հենց քեզ համար հայտարարում է ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՐՈՇՅՈՒՐՆԵՐԻ ՄՐՅՈՒՅԹ: Պետք է ըստ թիրախների պատրաստել պարզ և հասկանալի ուսուցողական բրոշյուրներ՝ հետևյալ թեմաներով.

ԻՄ ՎԱՐԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԱՅՍՕՐ

Խնայողություններին նվիրված այս թեմայի շրջանակում կարող եք անդրադառնալ խնայողություն կատարելու նպատակներին, խնայողությունը պահելու արդյունավետ տարբերակներին, դրանց՝ ըստ ժամկետի, ըստ արժույթի, ըստ գործիքի և ըստ կառույցի բազմազանեցման (դիվերսիֆիկացիա) անհրաժեշտությանը և ձևերին, բերել գործնական օրինակներ և այլն:

ԲՐՈՇՅՈՒՐԻ ԹԻՐԱԽԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ:

ՆԱԿԱՍԱՐԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ԻՆՉՈՒՄ

Անձնական բյուջեի կառավարման կարևորությանն ուղղված այս բրոշյուրում կարող եք ներառել տեղեկատվություն եկամուտների և ծախսերի մասին, գյուղատնտեսական միջավայրից բերել օրինակներ, թե ինչպես կարելի է ամենափոքր գումարի դեպքում անգամ բյուջեն պլանավորել և ճիշտ կառավարել, ավելացնել եկամուտները, վարկ ունենալու դեպքում ևս ճիշտ պլանավորել բյուջեն, կրճատել ոչ անհրաժեշտ ծախսերը՝ դրական մնացորդ ապահովելու նպատակով:

ԲՐՈՇՅՈՒՐԻ ԹԻՐԱԽԸ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԳԵԼԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ

www.abcfinance.am կայքի «Իմ ֆինանսների ամիս 2016» Բրոշյուրների մրցույթ բաժնից բեռնում եք դիմում-հայտը, ծանոթանում դրույթներին, լրացնում ու կցում բրոշյուրին:

Փետրվարի 15-ից ապրիլի 1-ը

բրոշյուրն ուղարկում եք consumerinfo@cba.am հասցեին՝ նամակի վերնագիրը նշելով **ԲՐՈՇՅՈՒՐՆԵՐԻ ՄՐՅՈՒՅԹ**:

Կարող եք նաև թղթային տարբերակով ուղարկել կամ բերել չէ կենտրոնական բանկ (Երևան, Վազգեն Սարգսյան 6, աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից 18:00-ն՝ նախապես զանգահարելով 010 592 697 հեռախոսահամարով):

Հաղթողների անունները կիրառարակվեն, և մրցանակները կհանձնվեն մայիսի սկզբին՝ «Իմ ֆինանսների ամիս 2016» ծրագրի փակման արարողության ընթացքում:

Արդյունքների մասին կարող եք տեղեկանալ նաև www.abcfinance.am կայքում:

ՄՐՅԱՆԱԿՆԵՐ

Յուրաքանչյուր թեմայի շրջանակում ժյուրին կընտրի 2 հաղթողների, որոնք կարժանանան մրցանակների՝

1-ին տեղ՝ **75 000** դրամ,

2-րդ տեղ՝ **50 000** դրամ:

Լավագույն բրոշյուրները կտեղադրվեն www.abcfinance.am կայքում, սոցիալական կայքերի (Facebook, Twitter) համանուն էջերում:

Կարող են լինել նաև հատուկ մրցանակներ բանկերի, ապահովագրական ընկերությունների, վարկային կազմակերպությունների և այլ ֆինանսական կառույցների/ընկերությունների կողմից:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև բրոշյուրում որևէ նկար/տեսանյութ ներառելը, վստահ եղեք, որ այն կարող է օգտագործվել մեր կողմից՝ չառաջացնելով հեղինակային իրավունքների ոտնահարում:

Աշխատանքները ստանալուց հետո չէ կենտրոնական բանկի և Ձեր միջև համատեղ աշխատանքի միջոցով աշխատանքում կարող են իրականացվել խմբագրական փոփոխություններ:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

- մրցույթին մասնակցելու համար տարիքային սահմանափակում չկա,
- մրցույթին մասնակցությունն ԱՆՎՃԱՐ է,
- բրոշյուրին կից պետք է ներկայացնել ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ,
- բրոշյուրի նյութը պետք է պատասխանի հետևյալ հարցադրումներին՝ ինչ, ինչու, ինչպես, ինչու է կարևոր և այլ:
- բրոշյուրը պետք է լինի 4 էջ, 12 տառաչափով, տողերի միջև հեռավորությունը՝ 1,15, եզրաչափերը՝ Normal (աջ՝ 1, ձախ՝ 1, վերև՝ 1, ներքև՝ 1),
- բրոշյուրը կարող է լինել Word, PPT, CORAL տարբերակներով:

Հարցերի դեպքում՝

այցելեք www.abcfinance.am կայք, գրեք մեզ consumerinfo@cba.am հասցեով կամ Facebook-յան ABCFinance.am էջին, զանգահարեք 010 592 697 հեռախոսահամարով:

Սիրով սպասում ենք Ձեր աշխատանքներին

Մաղթում ենք հաջողություն՝ **ՉՉ կենտրոնական բանկ**

